ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СООБЩЕНИЯ

Հ. Հ. ԴԱԼՍՏՅԱՆ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԸ ԸՍՏ Վ. ՔԻՆԵԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ

Վ. Քինեի քառահատոր «Ասիական Թուրքիան» աշխատությունը, որը հրատարակվել է XIX դ. 90-ական թվականներին, այլազան բնույթի շահեկան տեղեկությունների հետ տալիս է նաև Օսմանյան կայսրության ասիական վիլայեթների, վարչական ենթաշրջանների՝ սանջակների, կազաների, քաղաքների բնակչության ազգային կազմի վերաբերյալ վիճակագրական տվյալներ[1]։ Այն, մանրամասնությունների տեսակետից եղակի լինելով, դարձել է բազմաթիվ ուսումնասիրությունների, հանրագիտարանների, տեղեկատուների և դիվանագիտական փաստաթղթերի հիմնական սկզբնաղբյուր։

Սակայն թուրքական պաշտոնական և մեծ մասամբ մինչ այդ չհրապարակված տվյալներ ընդգրկող այդ վիճակագրությունը զերծ չէ մի շարք խոշոր թերություններից։ Խեղաթյուրված է ներկայացնում վիլայեթների դեմոգրաֆիական վիճակը, բնակչության ազգային կազմը, մասնավորապես արևելյան վիլայեթների մեծ մասում հայ ազգաբնակչության թվաքանակը։

Մի շարք պատմաբաններ, անդրադառնալով Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչության թվաքանակի հարցերին, իրավացիորեն խորհուրդ են տվել քննադատաբար մոտենալ Վ. Քինեի հրապարակած տվյալներին, սակայն նկատված թերությունները, սխալները փորձել են պատճառաբանել ընդհանրապես Օսմանյան կայսրությունում կանոնավոր վիճակագրության բացակայության, զինվորական հարկից ազատվելու նպատակով քրիստոնյաների հաշվառումից խուսափելու, հայկական հարցի կապակցությամբ թուրքական իշխանությունների կողմից հայ ազգաբնակչության թվաքանակը դիտավորյալ նվազեցնելու հանգամանքներով։ Ոմանք էլ, հայկական հարցի նկատմամբ ունենալով մերժողական տրամադրություններ, աշխատել են Վ. Քինեի վիճակագրության տվյալները ներկայացնել որպես հավաստի։

Ուստի, ներկա հոդվածի հնարավորությունների սահմաններում կաշխատենք ցույց տալ հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ վիճակագրության հեղինակի թույլ տված սխալները և միտումները։

Հայ ազգաբնակչության թվի միտումնավոր նվազեցումը թուրքական իշխանությունների և Վ. Քինեի կողմից կատարվել է հիմնականում երկու եղանակով.

Առաջին՝ սովորական նվազեցման եղանակ. հաշվի են առնվում խնդրո առարկա վիլայեթի կամ ենթաշրջանի բոլոր հայաբնակ բնակավայրերը, սակայն դրանց հայ ազգաբնակչությունը ներկայացվում է նվազեցված։

Երկրորդ՝ առանձին ենթաշրջաններում բնակչության ամբողջովին կամ մասնակի անտեսման եղանակ։ Այս եղանակը հնարավորություն է տալիս մոռացության մատնել ավելի քան հարյուր հազար հայերի միայն Արևմտյան Հայաստանում։ Այս եղանակի առկայությունը Վ. Քինեի վիճակագրության մեջ դիտողների ուշադրությունը չի գրավել, թեև, օրինակ, Արշակ Ալբոյաջյանը Մալաթիայի կազայի վերաբերյալ վիճակագրության տվյալները քննարկելիս նկատել է, որ թե՛ ամբողջ կազայում, թե՛ կենտրոնական ավանում (Մալաթիա քաղաքում) բնակվող կաթոլիկ և բողոքական հայերի համար նույն թվերն են տրվում, և որ Մալաթիայի գավառում, ըստ այդ տվյալների, բացի քաղաքից, ուրիշ տեղ կաթոլիկ և բողոքական հայեր չկային, ու պատասխանում է. «ինչ որ սխալ է, վասն զի կային»[2]։

Երկրորդ եղանակը, առաջինի հետ զուգակցված ավելի լայն և միանգամայն ավելի բացահայտ օգտագործվել է Արևմտյան Հայաստանի երկու վիլայեթներում՝ Վանում և Խարբերդում, նաև հարևան Հալեպի վիլայեթում։ Եվ պատահական չէ, որ այդ երեք վիլայեթների հայ ազգաբնակչության վերաբերյալ տվյալները խիստ տարբերվում են Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից ներկայացված տվյալներից։ Ուստի կանգ կառնենք այդ վիլայեթների վրա։

Ա. ՎԱՆ

Վանի կազան դեռևս XIX դ. վերջերին Արևմտյան Հայաստանի բազմամարդ և առավել հայաշատ կազաներից մեկն էր։ Այնտեղ կային բազմաթիվ գյուղեր։ Ըստ Վ. Քինեի՝ 154 գյուղ[3]։ Այդ թիվը համապա-

տասխանում է իրականությանը։ Վանի վիլայեթի 1897 թ. տարեգիրքը ևս հաղորդում է 154[4]։ Սակայն նույնը չի կարելի ասել ազգաբնակչության վերաբերյալ Վ. Քինեի կողմից բերված տվյալների համար։ Ըստ Վ. Քինեի, Վանի կազայի ընդհանուր բնակչությունը կազմում էր 35500 մարդ[5], որից 30 հազարը բնակվում էր Վան քաղաքում[6]։ Նշանակում է, որ 154 գյուղերում բնակվում էր ընդամենը 5500, կամ միջին հաշվով մեկ գյուղում 36 մարդ։ Վանի կազայի դեմոգրաֆիական վիճակին ծանոթ որևէ մեկը չի կարող ընդունել այդ համեմատությունից բխող հետևությունը և բնականաբար կմտածի խոշոր մի սխալի առկայության մասին։

Վանում ռուսական հյուպատոսի տեղակալ Վ. Տ. Մայևսկին մոտիկից ծանոթ լինելով Վանի դեմոգրաֆիական վիճակին, թեև հիմնականում Վ. Քինեի տվյալներն ընդունում է, սակայն անհրաժեշտ է համարում կանգ առնել վերը բերված սխալի վրա։ Նա իրավացիորեն գրում է. «Կարելի է ցույց տալ 3—4 գյուղեր, որոնցից յուրաքանչյուրն ունի 1000—1500 բնակչություն։ Իսկ ի՞նչ է մնում մնացյալ 150 գյուղերին...»։ Եվ իր այս հարցին տալիս է հետևյալ պատասխանը. «Պետք է ենթադրել, որ Վանի կազայի բնակչությունը թվարկելիս սխալմամբ ընդհանուր գումարի մեջ չի մտել Վան քաղաքի բնակչությունը»[7]։ Այդ կարծիքին է եղել նաև Գրյազնովը։ Սակայն և՛ Մայևսկին, և՛ Գրյազնովը սխալվում են, որովհետև ինչպես ցույց է տալիս Վանի կազայի և Վան քաղաքի բնակչության վերաբերյալ տվյալների ավելի մանրամասն՝ ըստ աղբյուրների համեմատությունը, Վ. Քինեի կողմից հաշվառման չի ենթարկվել ոչ թե քաղաքի ընդհանուր բնակչությունը, այլ՝ հայ գյուղացիությունը։

Ըստ Վ. Քինեի, Վանի կազայում բնակվում էին 21500 մահմեդականների հետ 12498 հայեր, 1002 այլ քրիստոնյաներ և 500 հրեաներ[8]։ Սակայն նույնիսկ նվազեցված տվյալներով այդ 12498 հայերը, 1002 այլ քրիստոնյաները և 500 հրեաները միայն Վան քաղաքի բնակիչներն են եղել[9]։

Ուրեմն Վ. Քինեն ամբողջովին անտեսում է Վանի կազայի ոչ մահմեդական գյուղացիությունը, որը հիմնականում հայերից էր բաղկացած։ Ըստ այդ համեմատության, գյուղերում բնակվում էին միայն 5500 մահմեդականներ։

Մեզ մնում է ապացուցել մի հանրահայտ փաստ, որ Վանի կազայում կային հայաբնակ գյուղեր։ Համառոտակի անդրադառնանք այդ հարցին։

Ըստ Վ. Տ. Մայևսկու կողմից բերված գյուղացուցակների, որոնք հավանաբար ընդօրինակված են թուրքական պաշտոնական անտիպ աղբյուրներից, Վանի կազայում, այսինքն՝ նրա Վան-Տոսպ, Հայոց Ձոր, Թիմար և Արճակ նահիյեներում (գյուղախմբերում), Վան քաղաքից բացի, կային 167 գյուղեր՝ 7739 տուն ընդհանուր բնակչությամբ։ Հայաբնակ էին 106 գյուղեր, որոնցից 46-ը՝ զուտ հայաբնակ։ Հայ գյուղացիությունը բաղկացած էր 4824 տնից, որը կազմում էր տների ընդհանուր թվի 62 տոկոսը[10]։

Ա-Դոյի ջանքերով կազմված գյուղացուցակների համաձայն, Վանի կազայի նույն չորս նահիյեներում կային մոտավորապես նույնքան հայաբնակ գյուղեր՝ 110 գյուղ (5781 տուն), Մայևսկու տվյալների համեմատությամբ 957 տուն ավելի, ուր Ա-Դոյի կարծիքով կարելի է հաշվել 38 հազար մարդ[11]։ Մեր կարծիքով այդ թիվը կարելի է ընդունել որպես նվազագույն թիվ, որովհետև Վ. Քինեի վիճակագրության կազմվելու թվականին, այսինքն՝ հայկական կոտորածներից առաջ, հայերը բնականաբար ավելի մեծ թիվ էին կազմում։

Վ. Քինեի վիճակագրության մեջ անտեսվել են նաև Վանի կազայի գյուղերում բնակվող, թեև փոքրաթիվ նեստորականները (187 տուն), եզիդի քրդերը (138 տուն)[12]։

Բ. ՄԵԾԿԵՐՏ, ԲԵՐՐԻ, ԲԵՐԴԱԿ

Հայ գյուղացիությունը ամբողջովին անտեսվել է նաև Բերդակի, Մեծկերտի և Ջարսանջակի (Բերրիի) կազաներում, որոնք ըստ վարչական բաժանման, մտնում էին Խարբերդի վիլայեթի Դերսիմի սանջակի մեջ։

Վ. Քինեի տվյալների համաձայն Բերդակում բնակվում էին ընդամենը 701 հայեր, Մեծկերտում՝ 811, Բերրիում՝ 819. բոլորը համանուն գավառակների կենտրոնական ավաններում, իսկ գյուղերում՝ մահմեդականներ, քրդեր և ղզլբաշներ[13]։

Համաձայն Վ. Քինեի ներկայացրած վարչական բաժանման, հարեվան այդ գավառակները առանձին կազաներ էին։ Սակայն թե՛ Վ. Քինեից առաջ և թե՛ հետո, դրանք հաճախ որպես ենթաշրջաններ, մտնում էին մեկը մյուսի մեջ։ Ուստի ավելի նպատակահարմար է դրանք դիտել որպես մի ամբողջություն։ Իրոք ոչ հեռավոր անցյալում այդ երեք գավառակները Սաղմանի հետ միասին կազմում էին վարչական մի միավորություն՝ Ջարսանջակ (Ձորս գավառ) անվանումով։ Հայկական եկե-

ղեցու թեմական բաժանումը ևս համապատասխանում էր վարչական այդ բաժանման։ Բերդակը, Բերրին, Մեծկերտը հանդիսանում էին Զարսանջակի առաջնորդության թեմերը։ Զարսանջակի առաջնորդությանն էին կապված նաև Խոզաթի գավառակի 11 և իրենց տեղադրությամբ Զարսանջակին հարող մի քանի այլ հայաբնակ գյուղեր, թեև վարչական բաժանումով մտնում էին այլ կազաների մեջ[14]։

Զարսանջակը որպես վարչական միավոր, երկար չի պահպանել իր գոյությունը։ Տրոհվել է առանձին շրջանների։ Սակայն հայկական եկեղեցու թեմական բաժանումը մինչև առաջին համաշխարհային պատերազմը հիմնականում մնացել է անփոփոխ։ Այդ պատճառով էլ «Զարսանջակ» հասկացությունը հայկական պատմաազգագրական գրականության մեջ ընկալվում է նույնպես անփոփոխ։

Զարսանջակն այդ սահմաններում Արևմտյան Հայաստանի հայաբնակ գավառներից էր։

Բացի Խոզաթին ենթակա 11 և մի քանի այլ գյուղերից, որոնք վարչական բաժանումով պատկանում էին հարևան կազաներին, Բերրիի, Բերդակի, Մեծկերտի գավառակներում, կենտրոնական ավաններից բացի, կային 60-ի մոտ հայաբնակ գյուղական բնակավայրեր, որոնց հայ ազգաբնակչության թիվը հասնում էր 15 հազարի։ Կարելի է վիճարկել, իհարկե, այդ թիվը։ Սակայն կարևոր են հարաբերական թվերը ևս։ Այդ դեպքում էլ, թեև տարբեր աղբյուրներ տարբեր թվեր են ներկայացնում հայ և այլազգի բնակչության համար, այնուամենայնիվ ցույց են տալիս, որ հայերը կազմում էին բնակչության մեծամասնությունը։ Ըստ 1872—1873 թթ. Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին կից Ազգային Կենտրոնական վարչության հրատարակած գավառական վիճակագրության, Զարսանջակի այդ 60 գյուղերի 2252 տուն բնակչությունից 1254-ը (56%) հայեր էին[15], իսկ ըստ 1894 թ. մարդահամարի տվյալների՝ 2973 տնից՝ 1769-ը (60%)[16]։

Այդ մասին է վկայում նաև Խարբերդի վիլայեթի 1880 թ. պաշտոնական վիճակագրությունը, ուր ներկայացված է վիլայեթի միայն տղամարդկանց թիվը։ Հայերի վերաբերյալ թվերը քաղված են զինվորական հարկը վճարողների, իսկ մահմեդականների (Թուրքերի) վերաբերյալ տվյալները՝ զինծառայության համար պահվող կառավարական ցուցակներից։ Մահմեդականների թվի վրա գումարվել է նաև քրդերի և ղզլբաշների թիվը[17]։ Այդ վիճակագրության մեջ Զարսանջակի վարչական բաժանումն էլ մի քիչ այլ կերպ է ներկայացված։ Կազա է հիշվում միայն Բերրին, իսկ Բերդակը՝ նրա նահիեն։ Հավանական է, որ Մեծ-

կերտն էլ գտնվում էր Բերրիի կազմում։ Այդ վիճակագրության համաձայն, չնայած Բերդակի նահիեում բնակչության մեծամասնությունը մահմեդականներ էին, այնուամենայնիվ ամբողջությամբ վերցրած Բերրիի կազայում նորից հայերն էին կազմում բնակչության մեծամասնությունը (52%)։

Մինչդեռ Վ. Քինեի վիճակագրությունը, նվազեցնելով քաղաքաբնակ հայ ազգաբնակչության թիվը և բոլորովին անտեսելով հայ գյուղացիությունը, այդ երեք հարևան գավառակների հայ ազգաբնակչությունը ներկայացնում է ամբողջ բնակչության 13%-ը։

Գ. ՄԱՐԱՇ

Ըստ Քինեի, Մարաշի կազայում բնակվում էին ընդամենը 6015 հայեր, այդ թվում՝ 6008 քաղաքաբնակներ[18]։ Պարզվում է, որ հայ գյուղացիությունը բաղկացած էր ընդամենը 7 մարդուց։ Հետևաբար այստեղ ևս հայաբնակ գյուղերն անտեսվել են։ Մարաշի կազայում կային մի շարք մեծ ու փոքր հայաբնակ գյուղեր։ Ըստ Գր. Հ. Գալուստյանի «Մարաշ կամ Գերմանիկ» գրքի տվյալների, որտեղ տեղեկություններ են տրվում 22 գյուղերի մասին, իրենց բազմամարդությամբ աչքի են ընկնում Ֆընտրճագը (400—500 տուն), Դերե-քյոյն (140 տուն), Քիշիֆլին (80 տուն), Ենիջե-կալեն (Նասարա) և Դյոնգելեն (յուրաքանչյուրը 60-ական տուն)։ Մնացյալները եղել են փոքր՝ 10—30 տուն բնակչությամբ[19]։

Դ. ԱԼԲԻՍՏԱՆ

(Հալեպի վիլայեթում)

Մարաշի սանջակի Ալբիստանի կազայում, ըստ Վ. Քինեի, եղել են միայն 154 հայեր՝ բոլորը քաղաքաբնակներ[20]։

Վ. Քինեն իր աշխատության երկրորդ հատորի 114-րդ էջում առանձին աղյուսակով տվել է Հալեպի վիլայեթի բնակչության վիճակագրությունը՝ ըստ սանջակների և կազաների, որտեղ մի շարք կազաներում նվազեցված է հայերի և չափազանցված՝ այլ քրիստոնյաների թիվը։ Նա կազաների մասին առանձին-առանձին խոսելիս, ըստ երևույթին, կատարված խեղաթյուրումն ընթերցողի ուշադրությանը չհանձնելու նպատակով, տալիս է քրիստոնյաների ընդհանուր թիվը՝ փակագծերում նշելով, որոշ ծանոթություններ ազգությունների մասին։ Այսպես, ամբողջ Ալ-

բիստանի գավառակի և համանուն քաղաքի վերաբերյալ վիճակագրության մեջ տրվում է քրիստոնյաների ընդհանուր թիվը՝ 2954 մարդ[21]։

Ս. Էփրիկյանի տվյալներով հայերի թիվը հասնում է 3000-ի։ Սակայն նա ևս անտեսում է երկու հայաբնակ գյուղեր[22]։ Այդ սխալը, պարզ է, որ գալիս է նրա օգտագործած աղբյուրից՝ Վ. Քինեի վիճակագրությունից։ Ս. Էփրիկյանը, որն ընդհանրապես կասկածի է ենթարկում Վ. Քինեի տվյալները, ներկա դեպքում, լռելյայն ուղղում մտցնելով նրա տվյալների մեջ, իրավացիորեն 3000 քաղաքաբնակ քրիստոնյաների ներկայացրել է որպես հայեր։ Սակայն, ըստ երևույթին, անհնար է անընդհատ սխալների հետ գործ ունենալ և չսխալվել։ Նա չի նկատել, որ միտումնավոր կերպով անտեսվել են երկու գյուղեր՝ Ալբիստան քաղաքից 3 ժամ հեռավորության վրա գտնվող 25 տնից բաղկացած Գյավուր գյուղը[23] (Քլաֆիրքենդի) և միաժամանակ երկու՝ Յարփուղ և Էֆսուս (Եփեսոս) անուններով հայտնի, շուրջ 2000 հայ բնակիչ ունեցող գյուղը։ Վերջինս, կարելի է ասել, մի փոքր գյուղաքաղաք էր[24]։

Ե. ԱՅՆԹԱՊ

(Հալեպի վիլայեթում)

Թե՛ կազայի, թե՛ քաղաքի հայ բնակչության համար Վ. Քինեն տալիս է նույն թիվը՝ 4640[25]։

XVIII դ. Այնթապի շուրջ գտնվող հարյուրից ավելի գյուղեր ամբողջովին հայաբնակ էին[26]։ Սակայն XIX դ. վերջերին դրանցից մնացել էր միայն մեկը՝ Օրուլը՝ 40—50 տնից բաղկացած[27], որն էլ անտեսվել է Վ. Քինեի կողմից։

Զ. ՈՒՐՖԱ

(Հալեպի վիլայեթում)

Ուրֆայի սանջակը բաղկացած էր չորս կազաներից. Ուրֆա, Ռումկալե (Հռոմկլա), Բիրեջիկ և Սրուչ։ Ըստ Վ. Քինեի, Ուրֆայի սանջակում ընդամենը երկու հայաբնակ բնակավայրեր կային. Ուրֆա և Բիրեջիկ ավանները։ Առաջինում բնակվում էին 5022 հայեր[28], երկրորդում՝ 1415[29]։ Բիրեջիկի համար ցույց տրված թիվը համապատասխանում էր իրականությանը, սակայն Ուրֆայի բնակչության վերաբերյալ տվյալը մոտավորապես չորս անգամ փոքր է իրականից[30]։ Միայն այդ երկու ավաններն ընդունելով որպես հայաբնակ, Վ. Քինեն անտեսում է Ուր-

ֆայի սանջակի բոլոր հայաբնակ գյուղերը, ինչպես նաև հայերի առկայությունը Հռոմկլա և Սրուչ ավաններում։

Հռոմկլա (Խալֆեթի) և Սրուչ ավաններում բնակվում էին ոչ մեծ թվով հայեր. Հռոմկլայում 1907 թ. տվյալներով՝ 6—8 տուն, իսկ Սրուչը 1899 թ. տվյալներով 50—60 ընտանիքից բաղկացած, կազմավորված մի օջախ էր, ուր կար նաև հայկական դպրոց[31]։

Հայաբնակ գյուղերից հայտնի էին Էհնեշն ու Ջիբինը՝ երկուսն էլ Հռոմկլայի գավառակում։ Հալեպի վիլայեթի 1905 թվականի տարեգիրքը նշում է, որ Հռոմկլայի կազայում Էհնեշ և Ջիբին անունով երկու գյուղերում կան երեք եկեղեցիներ և բնակվում են 580 հայեր[32]։ Հայ բնակչության իրական թիվն անկասկած երկու-երեք անգամ գերազանցում էր այս թիվը, քանի որ տարեգիրքը հաշվի է առնում միայն անձնագրային բյուրոներում արձանագրվածներին։

Առավել հայտնի գյուղերից էր Կարմունջը՝ Ուրֆայի սանջակի զուտ հայաբնակ խոշորագույն գյուղը։ XIX դարի 80-ական թվականներին այն ուներ 300—400 տուն բնակչություն, որը հետագայում աճեց, գրեթե կրկնապատկվեց[33]։

Ուրֆայի սանջակում կային նաև այլ հայաբնակ գյուղեր՝ Բոզ-Օվան, Հովիկը, Հողինը, Նիզիբը, Միզարը, Թլբաշարը, Թլկուրանը, Մանքուշը, Բեսուն և այլն[34], որոնք նույնպես անտեսվել են։

* * *

Հայ գյուղացիության մասնակի անտեսման դեպքում, բնականաբար, գյուղերում երևում են ինչ-որ թվով հայեր։ Հետևաբար, ամբողջ կազայի և կենտրոնական ավանի բնակչության վերաբերյալ տվյալների համեմատությունը չի կարող լիովին բացահայտել կատարված խեղաթյուրումը, մանավանդ, որ խեղաթյուրման այս եղանակն ընդհանրապես գործադրվել է բավականին խճճված ձևով՝ մի այլ խեղաթյուրման եղանակի խաչաձևումով։

Ա. ԱԿՆ

(Խարբերդի վիլայեթում)

Այստեղ կատարված խեղաթյուրումն ավելի շատ նմանվում է հայաբնակ գյուղերի ամբողջական անտեսման, սակայն որոշ վերապահություն ցուցաբերելով, այն դիտում ենք որպես մասնակի անտեսման դեպք։

Թե՛ ամբողջ գավառակի, թե՛ գլխավոր ավանի՝ Ակն քաղաքի հայ աղգաբնակչության համար տրվում է նույն թիվը՝ 7561[35]։ Նշանակում է, որ անտեսվել են գավառակի հայաբնակ գյուղերը։ Եվ այդ փաստը բողարկելու համար Վ. Քինեն, խոսելով Ակնա առավել հայտնի գյուղերի մասին, գրում է, որ բացառապես հայերով բնակեցված Շրգուն, Վանքը, Յորակը, Մուշաղկան, որոնց ընդհանուր բնակչությունը հասնում է 1272-ի, ինչպես նաև Կամարակապն ու Ապուշեխը շատ մոտ են քաղաքին և ընդհանրապես համարվում են նրա արվարձանները[36], ստեղծելով այն տպավորությունը, որ հայաբնակ գյուղերի բնակչությունը ևս մտել է քաղաքի բնակչության մեջ։ Արդյո՞ք դա այդպես է։

XIX դ. 80-ական թվականներին Ակնա գավառակում անցկացված մի մարդահամարի տվյալներով Ակն քաղաքում բնակվում էին 5442 հայեր և 4286 այլազգիներ[37]։ Վ. Քինեն այդ տվյալների համեմատությամբ հայ աղգաբնակչության համար ներկայացնում է ինչ-որ չափով չափազանցված՝ 7561, իսկ այլազգի բնակչության համար շատ ավելի չափազանցված՝ 11439 թվերը[38]։ Սակայն ավելի շատ և ավելի համոզիչ են այն փաստերը, որոնք բացառում են այս տվյալները։

Առաջին՝ ըստ XIX դ. 80-ական թվականների մարդահամարի տվյալների, Ակնա գավառակում, առանց հաշվի առնելու Բինկա (Բենկա, Բինկյան) գյուղը, որն ըստ վարչական բաժանման մտնում էր Դիվրիկի գավառակի մեջ, բնակվում էին 9093 հայեր[39]։ Վ. Քինեն, ինչպես տեսանք, տալիս է ավելի նվազ թիվ՝ 7561։

Երկրորդ՝ հիշյալ մարդահամարի արդյունքների հետ փոքր-ինչ ծանոթությունը պարզում է, որ այդ վիճակագրությունը վերաբերում է միայն Ակնա առաջնորդության ենթակա գյուղերին և հաշվառումից դուրս են մնում այն գյուղերը, որոնք, ըստ վարչական բաժանման, պատկանում էին Ակնա կազային, բայց ենթակա էին Արաբկիրի առաջնորդությանը։ Այդ գյուղերն ընդգրկվելու դեպքում, մեծանում է հայ աղգաբնակչության իրական թվի և Վ. Քինեի ներկայացրած տվյալի միջև եղած տարբերությունը։

Երրորդ՝ Արաբկիրի առաջնորդության ենթակա գյուղերը շատ հեռու էին Ակն քաղաքից և չէին կարող նրա արվարձանները համարվել։ Գ. Սրվանձտյանցը, խոսելով այդ 15 հայաբնակ գյուղերի մասին, նկատում է. «Վերոհիշյալ գեղերը թեպետ Արաբկերի առաջնորդության թեմն են, բայց տասն գեղ Ակնա գայմագամության ենթակա են. որո իրավասության տակ մյուդիր կնստի Աղրն գեղը։ Ահա անկանոնություն մը ժողովրդյան գործեր տեսնալու. մանավանդ այս գեղեր 5—6 ժամ

հեռի են Արաբկերեն, իսկ Ակնեն 10—12 ժամ երկյուղալից ճանապարհով»[41]։ Մի փաստ, որ Վ. Քինեի կողմից ներկայացված վարչական բաժանումն էլ է հաստատում և որ այդ գյուղերից Աղինը (Վաղավերը), Անջրդին ու Էհնեցիքը հանդիսանում էին Ակնա նահիեների կենտրոններ[41]։

Չորրորդ՝ եթե հայկական բոլոր գյուղերը ներկայացված լինեին որպես քաղաքի արվարձաններ, ապա նույն կերպ պետք է վարվեր Վ. Քինեն նաև այլազգիներով բնակեցված բազմաթիվ գյուղերի համար։ Բացի դրանից, մի շարք հայաբնակ գյուղերում, այդ թվում Շրղու, Վանք, Ցորակ, Մուշաղկա գյուղերում, որոնք Վ. Քինեն ներկայացնում է բացառապես հայաբնակ, հայերի հետ բնակվում էին նաև այլազգիներ, որոնք նույնպես պիտի մտցվեին քաղաքի բնակչության թվի մեջ։ Այսպիսով, հազիվ թե փոքրաթիվ գյուղաբնակ այլազգիներ պիտի երևային Ակնա գյուղերում։ Մինչդեռ, ընդհակառակը, Վ. Քինեն այստեղ էլ ներկայացնում է բացահայտ կերպով չափազանցված թիվ՝ մոտավորապես 42 հազար։ Կարելի է բերել այդ չափազանցությունը հաստատող մի շարք փաստեր։ Բավարարվում ենք, հիշելով դրանցից երկուսը։

Ըստ ֆրանսերեն լեզվով Կ. Պոլսում լույս տեսնող „Annuaire Oriental“ տարեգրքի 1912 թվականի հրատարակության, այլազգիների թիվը ամբողջ գավառակում, ներառյալ քաղաքի բնակչությունը, 30 հազարից չէր անցնում[42]։ Իսկ ըստ Ալի Ջեվատի կողմից 1897 թ. հրատարակված պատմաաշխարհագրական բառարանի, 35 հազար էր գավառակի ամբողջ բնակչությունը[43]։

Այսպիսով, պարզվում է, որ Ակնա գավառակում անտեսվել էր եթե ոչ ամբողջ հայ գյուղացիությունը, ապա՝ մեծամասնությունը։

Բ. ԽԱՐԲԵՐԴ

Վ. Քինեն, իր աշխատության երկրորդ հատորի 352-րդ էջում, առանձին ցուցակով տալիս է Խարբերդի գավառակի երկու ավանների՝ Խարբերդի և Մեզիրեի և 15 առավել հայտնի և առավել հայաշատ գյուղերի[44] բնակչության թիվն ու ազգային կազմը։ Ըստ նրա, այդ վայրերում հայ ազգաբնակչության թիվը հաշվվում է 25340 մարդ։ Աշխատության հաջորդ էջում, նույն թվով (25340) է ներկայացվում նաև ամբողջ գավառակի (կազայի) հայ ազգաբնակչությունը։ Վ. Քինեն անտեսել է Խարբերդի գավառակի մյուս հայաբնակ գյուղերը։

Խարբերդում՝ Խարբերդ և Մեղիրե ավաններից բացի, կային ոչ թե 15, այլ՝ շուրջ 60 հայաբնակ գյուղեր։ XIX դ. 80-ական թվականներին անցկացված մի մարդահամարի համաձայն, այդ անտեսված գյուղերի հայ ազգաբնակչության թիվը հասնում էր 15 հազարի[45]։ Սակայն հետագա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Խարբերդի գյուղերը նույնիսկ ավելի հայաշատ էին[46]։

Դ. ԶԵՅԹՈՒՆ ԵՎ ԱՆՏՐՈՒՆ

(Հալեպի վիլայեթում)

Մարաշի սանջակի երկու կազաներում՝ Մարաշում և Ալբիստանում, ինչպես ասվեց վերևում, ամբողջովին անտեսվել էին հայաբնակ գյուղերը։ Իսկ սանջակի մյուս երեք կազաներում (Զեյթուն, Անտրուն, Բազարջըք) հայ գյուղացիության որոշ մասն անտեսվել է՝ խեղաթյուրելով իրականությունը։ Վ. Քինեի համաձայն, գյուղերում բնակվում էին միայն բողոքականներ. Զեյթունում՝ 1000, Անտրունում՝ 1000—1500 և Բազարջըքում՝ 500[47]։

Վերոհիշյալ գավառակներում բողոքականները փոքրաթիվ էին, սակայն Վ. Քինեն բողոքականների թվի չափազանցումով աշխատել է թաքցնել հայ բնակչության հիմնական մասի՝ լուսավորչականների, անտեսումը։ Զանց առնելով Բազարջըքը, որտեղ հայերը սակավաթիվ էին, համառոտակի անդրադառնանք Զեյթունի և Անտրունի գյուղերին։

Զեյթունում կային շուրջ 85 հայաբնակ գյուղական բնակավայրեր։ Մեծ գյուղերից հայտնի էին Արեգինը (Ալապաշ)՝ 300 տուն, Ավագկալը (Մբխալ)՝ 150 տուն, Ֆրնուզը (Խժոտ)՝ 300 տուն։ Փոքր գյուղերի մեծամասնությունը ագարակներ էին։ Միջին հաշվով 7 տնից բաղկացած 45 գյուղեր և ագարակներ կային Արեգինի շրջակայքում, Ավագկալի շրջակայքում՝ 14 (միջին հաշվով 11 տուն), Ֆրնուզի շրջակայքում՝ 15 (միջին հաշվով 20 տուն)։ Բացի նշվածներից, կային հայաբնակ ևս 8 գյուղեր և ագարակներ։ Այլազգի (թրքաբնակ, չերքեզաբնակ և այլն) գյուղերն ընդհանրապես փոքր էին և մեծ թիվ չէին կազմում (ընդամենը 24 գյուղ)[48]։

Թվարկված տվյալներից կարելի է ենթադրել, որ Զեյթունի հայ գյուղացիությունը բաղկացած էր նվազագույն տասը հազար շնչից։ Ըստ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի 1880 թ. վիճակագրության, որ նույնպես զերծ չէ թերություններից, Զեյթունի կազայում բնակվում էին 27460 հայեր, քաղաքում՝ 17600, գյուղերում՝ 9860[49]։

Դժբախտաբար, տարբեր վիճակագրական ցուցակներում, մանր գյուղերն ու ագարակները, միմյանցից ունեցած հեռավորության համաձայն խմբավորվել են որպես այս կամ այն գյուղի թաղերը, որի հետևանքով քիչ թվով գյուղանուններ են հիշվում։ Օրինակ, 1878—1880 թթ. Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից պատրաստված ցուցակում հիշվում են 14 հայաբնակ (զուտ հայաբնակ և խառը բնակեցված) և 14 ոչ հայաբնակ գյուղեր։ Այդ ցուցակում տեղ գտած հայաբնակ գյուղերից հինգը, այսինքն՝ ավելի շատ ոչ հայաբնակ շրջանում գտնվող գյուղերը (Բեշեն, Սարը-կյուզել, Ալիշար, Բեյթեմուր, Էրիջեք կամ Էսեն-դերե) համարյա այլազգիներով բնակեցված գյուղեր էին։ Այդ գյուղերում կային ընդամենը 180 հայեր[50]։ Ի միջի այլոց մեզ հայտնի իրադրության պայմաններում, այդ գյուղերը բոլորովին դատարկվեցին հայությունից։ Հետագա հայկական աղբյուրներում արդեն դրանք հիշվում են որպես թուրքաբնակ։ Պարզվում է, որ պատրիարքարանի ցուցակում արտահայտված են հիմնականում հայերով բնակեցված միայն ինը գյուղերի անուններ։ Դա խոսում է այն մասին, որ ավելի շատ խմբավորման ենթարկվել են հայաբնակ գյուղերը։

Պաշտոնական վիճակագրությունը, անկախ բնակչության թվից, ամեն մի առանձին բնակավայրն ընդհանրապես ընդունում էր որպես առանձին գյուղ, սակայն տարօրինակ զուգադիպությամբ, պաշտոնական վիճակագրությունն էլ է այստեղ դիմել խմբավորման մեթոդին։ Ըստ 1905 թ. Հալեպի վիլայեթի տարեգրքի, 31 գյուղեր կային Զեյթունում[51]։ Դրանցից 14-ը հիշատակվում են պատրիարքարանի ցուցակում։ Հայկական աղբյուրների հետ համեմատությունը ցույց է տալիս, որ տարեգրքի ցուցակում տեղ են գրավել նաև հայաբնակ երկու այլ գյուղեր՝ Թելեմելիքը և Զաքրրդերեն։ Դրանց վրա, մեր կարծիքով, պետք է ավելացնել, ըստ տարեգրքի՝ Տատուրլու (Տատուրենք) կոչվող գյուղը, թեև ցարդ մեզ չհաջողվեց տեղեկություններ գտնել այդ գյուղի մասին։

Իսկ Կ. Պոլսի Այրիախնամ հանձնաժողովի 1910—1912 թթ. երկամյա տեղեկագրում հայաբնակ գյուղերի թիվը հասնում է 32-ի[52], և այստեղ բնականաբար չեն հիշվում պատրիարքարանի ցուցակի առաջին հինգ հայաբնակ գյուղերը։

Այժմ համառոտակի անդրադառնանք Անտրունի կազայի հայաբնակ գյուղերին։ Եթե հաշվի չառնենք 300—350 տուն հայ բնակչություն ունեցող Կապանը (Կեպեն)[53], որը կազայի գլխավոր ավանն էր, առավել հայտնի գյուղ էր Կոկիսոնը (Կյոքսուն), որը համանուն նահիեի

կենտրոնն էր։ Նրա 300 տուն բնակչությունից 80 տունը հայեր էին[54]։ Ըստ Աղասու, Կոկիսոնի դաշտում գտնվում էին ընդամենը 430 տուն հայ բնակիչ ունեցող Հեյիք (Ջամբս-Հեյուք), Քիրեջ (Քիրեճ-օլուգ, Վերի Ավագկալ), Գյոլ-փնար, Դեյիրմեն-դերե, Թաշ-օլուգ գյուղերը, իսկ Անտրունի այլ շրջաններում, հիմնականում Կապանի դաշտում՝ Սիսնե, Բունդուգ, Շիվիլկի, Դավուտենք, Անտրուն, Տրդատենք գյուղերը՝ 550 տուն հայ բնակչությամբ[55]։ Դրանց վրա պետք է ավելացնել 80 տուն հայ բնակիչ ունեցող Անաջրգը (Անրճրգ, Անեցիք)[56], որն, ըստ Հալեպի վիլայեթի տարեգրքի, գտնվում էր Անտրունի կազայում[57]։

* * *

Առանձին շրջանների հայ գյուղացիության ամբողջովին կամ մասնակի անտեսումը, անկասկած, կոպիտ սխալ է պատմական աշխարհագրության տեսակետից։ Վիլայեթների, մասնավորապես առանձին շրջանների, բնակչության ազգային կազմը խեղաթյուրելու, հատկապես հայ ազգաբնակչության տոկոսները նվազեցնելու գործում, ազդեցություն են ունեցել նաև խեղաթյուրման այլ եղանակներ, որոնց հետ թեև հանդիպեցինք արդեն, այնուամենայնիվ կարծում ենք, նպատակահարմար է տեսնել այդ բոլորի օգտագործումը հատկապես Հալեպի վիլայեթում։

Հալեպի վիլայեթի ընտրությունը կապված է հետևյալ երկու պատճառների հետ.

ա) Տարբեր վիլայեթներում օգտագործվել են այդ եղանակներից մեկը կամ մի քանիսը, սակայն Հալեպի վիլայեթում՝ բոլորը, այն էլ բացահայտ կերպով։

բ) Մեր ձեռքի տակ ունենք մի երկրորդ աղբյուր՝ Հալեպի վիլայեթի 1898 թվականի տարեգիրքը, որը վիլայեթի բնակչության ազգային կազմի մասին տվյալներ է տալիս համապատասխան այն նույն վարչական բաժանման, որն ընկած է Վ. Քինեի վիճակագրության հիմքում և կարող է օգնել՝ բացահայտելու այդ վիճակագրության մեջ տիրող միտումները։

Ճիշտ է Հալեպի տարեգրքի տվյալները ևս ինչպես թուրքական որևէ վիճակագրություն, ճիշտ պատկերացում չեն տալիս բնակչության ազգային կազմի մասին, սակայն Վ. Քինեի տվյալների համեմատությամբ, ավելի մոտ են իրականությանը։

Հալեպի տարեգիրքը, ինչպես այդ մասին նշվում է, տալիս է միայն անձնագրային բյուրոներում գրանցված բնակիչների թիվը։ Այդ տվյալների համաձայն, Հալեպի վիլայեթում գրանցված են եղել 61 հազար լուսավորչական և կաթոլիկ հայեր։ Եթե ընդունենք, որ հիմնականում հայեր էին նաև այն տասը հազար բողոքականները, որոնց ազգությունը չի նշվում, գրանցված հայերի թիվը հասնում է 71 հազարի[58], թեև հայ ազգաբնակչությունը, ինչպես մյուս ոչ մահմեդականները, զինվորական տուրքից զերծ մնալու մտահոգությամբ, առնվազն կիսովին խուսափում էին ամեն տեսակի հաշվառումից և գրանցումից։ Համենայն դեպս, 71 հազարը ավելի մոտ է իրականության, քան Վ. Քինեի կողմից ներկայացված 49 հազարը[59]։

Շարունակելով համեմատությունը, տեսնում ենք, որ Վ. Քինեն այլ կերպ է վարվել մյուս ազգությունների նկատմամբ։

Այսպես, մեծ տարբերություններ չկան, ըստ կազաների, մահմեդական բնակչության վերաբերյալ Վ. Քինեի և Հալեպի տարեգրքի տվյալների միջև։ Հալեպի տարեգրքի համաձայն, իրենց մահմեդական բնակչությամբ առաջին, միջին և վերջին տեղերը զբաղեցնող կազաները Վ. Քինեի տվյալներով էլ ընդհանրապես զբաղեցնում են նույն կարգերը։ Դա վկայում է այն մասին, որ Վ. Քինեի համար աղբյուր են եղել նույնպես անձնագրային բյուրոների տվյալները, հետևաբար, մյուս բոլոր խոշոր տարբերություններն առաջացել են Վ. Քինեի կատարած փոփոխությունների հետևանքով։ Այսպես օրինակ, վիլայեթի մահմեդական բնակչության համար, Հալեպի տարեգրքի համեմատությամբ, նա ներկայացնում է փոքր-ինչ (3%) մեծ թիվ[60]։ Իսկ այլ ոչ մահմեդական ժողովուրդների (հույն, հրեա, ասորի, քաղդեացի, մարոնիտ, լատին) կամ նրանցից յուրաքանչյուրի համար Վ. Քինեն տալիս է զգալիորեն չափազանցված թվեր։ Նրանց ընդհանուր գումարը, որն, ըստ Հալեպի տարեգրքի, 34 հազարից չէր անցնում, Վ. Քինեի կողմից ներկայացվում է 154 հազար[61]՝ ավելի քան քառապատիկը։ Անկասկած, քրիստոնյաների իրական թվին մոտենալու համար անհրաժեշտ էր ինչոր չափով մեծացնել պաշտոնական տվյալները, սակայն տվյալ դեպքում դա այնպիսի չափեր է ընդունել, որ Վ. Քինեի տվյալները միանգամայն չափազանցության մեջ են գտնվում նաև իրականության նկատմամբ։

Պարզ է, որ այդ միակողմանի չափազանցություններն իրենց հերթին ծառայում են արհեստականորեն նվազեցնելու հայ ազգաբնակչության տոկոսային հարաբերությունը։ Դրանք, միանալով հայերի թվական

նվազեցմանը, բնակչության ազգային կազմի տեսակետից, սխալ պատկերացում են ստեղծում վիլայեթի մասին ընդհանրապես և առանձին շրջանների մասին՝ մասնավորապես։

Իրոք, առանձին շրջաններում թե՛ հայերի թվի նվազեցումը, թե՛ այլազգիների թվի չափազանցումը մեծ չափեր է ընդունում։ Այդպես է Զեյթունի կազայում։ Անգամ Հալեպի տարեգրքի տվյալներով, հայերը կազմում էին բնակչության բացարձակ մեծամասնությունը (53%), մնացյալ մասը մահմեդականներ էին, այլ քրիստոնյաներ չկային[62]։ Իսկ Վ. Քինեի վիճակագրության մեջ, ոչ միայն 58 տոկոսով նվազ է հայերի թիվը, այլև Զեյթունը լցվել է 12 հազար այլ քրիստոնյաներով (հույն, ասորի, քաղդեացի)։ Այդ խեղաթյուրման հետևանքով ստացվում է այնպես, որ հայերը ոչ միայն մեծամասնություն չէին կազմում գավառակի ամբողջ բնակչության, այլև քրիստոնյա բնակչության հարաբերությամբ։ Վ. Քինեի տվյալներով նրանք կազմում են քրիստոնյաների 32, իսկ գավառի ընդհանուր բնակչության 16 տոկոսը[63]։

Կարծում ենք կարիք չկա առանձին-առանձին վերլուծելու վիճակը տարբեր գավառակներում։ Մի կողմից հայերի թվի նվազեցումը, մյուս կողմից այլ ազգությունների վերաբերյալ տվյալների չափազանցումը մեծ չափերի է հասել առանձնապես Մարաշի և Ուրֆայի սանջակներում։ Եվ դա պատահական չէ։ Մարաշը վիլայեթի առավել հայաբնակ սանջակն էր։ Հարաբերական առումով ավելի հայաշատ էր նաև Ուրֆան, քան Հալեպի սանջակը, որտեղ, թեև հայերն ավելի մեծ թիվ էին կազմում, սակայն սանջակի ընդհանուր բնակչության ավելի փոքր տոկոսն էին։

Ոչ հավասարաչափ նվազեցումների և չափազանցությունների հետևանքով, խեղաթյուրված ձևով է ներկայացվում բնակչության տարբեր խմբերի տեղաբաշխումը ևս։ Օրինակ, եթե ըստ Հալեպի տարեգրքի, վիլայեթի հայ ազգաբնակչության 56,4 տոկոսը բնակվում էր Մարաշի և Ուրֆայի սանջակներում (հիմնականում Մարաշում՝ 41%), ապա Վ. Քինեի տվյալներով այդ տոկոսը իջնում է 37,8-ի (Մարաշում՝ 24,7%)։ Դրա փոխարեն, նույն սանջակներում զգալիորեն բարձրացնում են այլ ոչ մահմեդականների տոկոսները։ Ըստ Հալեպի տարեգրքի, այդ սանջակներում էին բնակվում նրանց 4,9 (Մարաշում՝ 0,9%), իսկ ըստ Վ. Քինեի տվյալների՝ 30,9 տոկոսը (Մարաշում՝ 21,6%)։

Ավելի ընդհանուր ձևով կարելի է ասել, որ Վ. Քինեի տվյալներում բնակչության տեղաբաշխման հիմքում ընկած են հետևյալ միտումները.

ա) Հայ ազգաբնակչության զգալի մեկ մասի ցրումը՝ բացարձակ կամ հարաբերական առումով առավել հայաբնակ շրջաններից դեպի նվազ հայաբնակ շրջանները։

բ) Այլազգի բնակչության զգալի մասի կուտակումը դեպի առավել հայաբնակ շրջանները։

Վերջապես, աչքից չի վրիպում մի մանրամասնություն ևս։ Հայ ազգաբնակչության թվաքանակի նվազեցումը կատարվել է հիմնականում լուսավորչականների թիվը նվազեցնելու միջոցով։ Բողոքականների, մասնավորաբար կաթոլիկ հայերի համար, թեկուզ Հալեպի տարեգրքի համեմատությամբ, տրվում են համեմատաբար մեծ թվեր։ Այնուամենայնիվ, քանի որ կաթոլիկներն ու բողոքականները հայ ազգաբնակչության համեմատաբար փոքր մի մասն էին կազմում, այդ չափազանցումները չեն կարող լուսավորչականների թվական նվազեցմանը փոխհատուցել։ Ինչպես տեսանք, վիլայեթի ամբողջ հայության համար ներկայացված թիվը, հակառակ այդ չափազանցությանը, խիստ փոքր է և 31 տոկոսով զիջում է անգամ Հալեպի տարեգրքի կողմից ներկայացված տվյալին։

Խեղաթյուրման այս եղանակները, թեև մեղմ ձևով, գործադրվել են նաև այլ վիլայեթներում։ Նկատելի է, օրինակ, Սվազի և Խարբերդի վիլայեթներում վիլայեթի մյուս սանջակների հաշվին այլազգի բնակչության կուտակումն առավել հայաշատ սանջակում։ Վ. Քինեի տվյալներով Սվազի և Խարբերդի սանջակներում էին բնակվում վիլայեթի մահմեդական բնակչության մոտավորապես կեսը կամ մեծամասնությունը. Խարբերդում՝ 49,5%[64], Սվազում՝ 53,7%[65]։ Սակայն մահմեդականների տեղաբաշխման վերաբերյալ այդ միտումը չի հաստատվում այլ տվյալներով։ Օրինակ, ըստ „Annuaire Oriental"-ի 1912 թվականի տվյալների, Խարբերդի սանջակում էր բնակվում վիլայեթի մահմեդականների 45%-ը[66], իսկ Սվազի սանջակում՝ 42%-ը[67]։

Հիշյալ վիլայեթների հետագա (1927 թ.) վիճակի տվյալները[68] համեմատության մեջ դնելով Վ. Քինեի տվյալների հետ, տեսնում ենք, որ բնակչության աճման տեմպերով 1927 թ. աչքի են ընկնում այն սանջակները, որոնց մահմեդական բնակչությունը Վ. Քինեի վիճակագրության մեջ հիշատակված են նվազեցված թվերով (Թոքատի սանջակ) և միանգամայն հակառակը՝ իրենց աճման տեմպերով խիստ ետ են մնում այն սանջակները, որոնց մահմեդական բնակչությունը Վ. Քինեն ներկայացրել է չափազանցված թվերով (Սվազի և Խարբերդի սանջակ-

ները)։ Ինչպես տեսնում ենք, այս փաստը նույնպես վկայում է Վ. Քինեի հաղորդած տվյալների անճշտության մասին։

Այնուամենայնիվ, Վ. Քինեի վիճակագրությունը ցարդ բավականաչափ ուսումնասիրված չլինելով, որոշ պատմաբաններ սխալը փնտրել են համեմատության մյուս եղրում։ Օրինակ, Ա. Ալբոյաջյանը համեմատության մեջ դնելով Թոքատի սանջակի Վ. Քինեի կողմից ներկայացված տվյալները հանրապետության շրջանի տվյալների հետ, զարմանքով նկատում է, որ, ըստ այդ համեմատության, Թոքատի բնակչությունն անհավատալիորեն աճել է։ Եվ նա ենթադրում է, որ հանրապետական շրջանի տվյալները չափազանցված են։ Նրա կարծիքով, Վ. Քինեն Օսմանյան կայսրության վարձկանն էր և չէր կարող իրականից նվազ ներկայացնել մահմեդականների թիվը[69]։ Մեր կողմից կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ դա արվում էր մեկ այլ սանջակում մահմեդականների թիվը չափազանցնելու նպատակով, և դա չի հակասում նրա «վարձկան» լինելու հանգամանքին։ Վ. Քինեն կապված լինելով եվրոպական երկրների դաղութատիրական շրջանների հետ, շահագրգռված չէր իրականությունը բացահայտել։ Նրա վերաբերմունքը համընկնում է Օսմանյան կայսրության վարած քաղաքականությանը։ Հենվելով այն փաստի վրա, որ չափազանցնում էր այլ քրիստոնյաների, մասնավորաբար կաթոլիկների թիվը, կարելի է ասել, որ նա ևս ուներ իր «սեփական» հաշիվները։

Խեղաթյուրման այս եղանակը կիրառվել է հայ ազգաբնակչության նկատմամբ .ևս։ Ըստ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալների, Սվազի վիլայեթի հայ ազգաբնակչության 44 տոկոսը բնակվում էր Սվազի սանջակում[70], իսկ Վ. Քինեի տվյալներով այդ տոկոսը 38-ից չէր անցնում[71]։ Հետաքրքիր է, որ այդ մեթոդը օգտագործվել է նույնիսկ սանջակների ներսում։ Օրինակ, հայտնի է, որ Շաբին-Կարահիսարի սանջակի Համիդիյե (Մելեդ), Քոյլահիսար (Քոյուլ-հիսար) և Ալուջրա կազաներում հայերը փոքրաթիվ էին, և հայ ազգաբնակչության հիմնական մասը բնակվում էր Շաբին-Կարահիսարի և Սուշեհրիի կազաներում։ Մինչդեռ, Վ. Քինեի տվյալներով այդ կազաներում էր գտնվում սանջակի հայության հազիվ 47 տոկոսը[72]։

Կարելի է բերել և այլ օրինակներ։ Սակայն, կարծում ենք, այսքանն էլ բավարար է գաղափար կազմելու համար Վ. Քինեի վիճակագրության մասին։

Վ. Քինեի «Ասիական Թուրքիան» աշխատությունը, որի հիմքում ընկած է պաշտոնական վիճակագրությունը, որպես նրա մի տարբե-

բակը, առանձին դեպքերում նույնիսկ ավելի խեղաթյուրված է ներկայացնում արևելյան վիլայեթների, մասնավորապես առանձին ենթաշրջանների (սանջակների, կազաների) բնակչության ազգային կազմը։

Վ. Քինեի վիճակագրությունը, հենվելով թուրքական պաշտոնական տվյալներին, Արևմտյան Հայաստանի և հայաբնակ այլ շրջանների հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տալիս է ընդհանրապես զգալի չափով նվազեցված տվյալներ։ Ներկա հոդվածում քննության են առնված միայն այն շրջանները, որտեղ հայերի թվաքանակի նվազեցումը ավելի մեծ չափեր է ընդունել՝ միաժամանակ Վ. Քինեի կողմից կատարված խեղաթյուրումների հետևանքով։

А. А. ГАЛСТЯН

НАЦИОНАЛЬНЫЙ СОСТАВ НАСЕЛЕНИЯ ЗАПАДНОЙ АРМЕНИИ ПО СТАТИСТИКЕ ВИТАЛА КИНЭ

Резюме

Опубликованные В. Кинэ статистические сведения об азиатских вилайетах Османской империи, в основе которых лежат официальные турецкие данные, не лишены недостатков, присущих этой статистике. Однако сведения, приведенные в работе В. Кинэ, имеют и свои пробелы, которые до сих пор не были обнаружены исследователями. Например, в сведениях о некоторых казах, населенных армянами (Ван, Медзкерт, Чарсанджак, Бердак, Антеп, Урфа, Мараш, Эльбистан), приводится численность только городского населения. Говоря о казах Харберд, Акн, Зейтун, Андрн, французский автор дает численность армян лишь некоторых деревень. В статье одновременно говорится о других статистических фальсификациях В. Кинэ. В частности, численность армян некоторых районов Кинэ дает меньше, чем указывается в официальной турецкой статистике. Явно искажая данные, касающиеся армянского населения, он умышленно увеличивает число турок, а также других христианских меньшинств в ущерб численности армян.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 *Vital Cuinet*, La Turqie d'Asie, t. 1—4, Paris, 1890—1895.

2 Արշակ Ալպոյաճեան, *Պատմութիւն Մալաթիոյ Հայոց*, Պէյրութ, 1961, էջ 453։

3 Վ. Քինե, նշվ. աշխ., հ. 2, էջ 632։

4 *В. Т. Маевский*, Ванский вилайет, Тифлис, 1901, с. 96—97.

5 Վ. Քինե, նշվ. աշխ., հ. 2, էջ 700։
6 Նույն տեղում, էջ 691։
7 В. Т. Маевский, նշվ. աշխ., էջ 89—90։
8 Վ. Քինե, նշվ. աշխ., հ. 2, էջ 700։
9 Նույն տեղում, էջ 691։ Իրականում քաղաքում բնակվում էին 20—25 հազար հայեր,—Հ. Գ.։
10 Հաշվումները կատարված են մեր կողմից։ Տե՛ս В. Т. Маевский, նշվ. աշխ., էջ 249—264։
11 Հաշվումները կատարված են մեր կողմից։ Տե՛ս Ա-Դօ, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 22—47։
12 Տե՛ս В. Т. Маевский, նշվ. աշխ., էջ 249—264։
13 Տե՛ս Վ. Քինե, նշվ. աշխ., հ. 2, էջ 394—397։ Ստացվում է, որ այդ երեք ավաններում բնակվում էին 2331 հայեր։ Մինչդեռ առնվազն այդքան և հավանաբար նույնիսկ ավելի մեծ թվով հայեր ապրում էին միայն Բերրիում՝ 318 տուն՝ ըստ Գ. Սրվանձտյանցի, 400 տուն՝ 3200 անձ ըստ Պ. Նաթանյանի (տե՛ս Գ. Սրվանձտյանց, Թորոս Աղբար, մաս Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 149—150, Պ. Նաթանյան, Արտասահման Հայաստանի, Կ. Պոլիս, 1883, էջ 105)։
14 Գ. Սրվանձտյանց, նշվ. աշխ., էջ 149—151։
15 Գ. Երևանյան, Պատմութիւն Զարսանճագի հայոց, Պէյրութ, 1956, էջ 172։
16 Նույն տեղում։
17 Վահե Հայկ, Խարբերդը և անոր ոսկեղէն դաշտը, Նիւ-Եորք, 1959, էջ 302—305։
18 Համմտ. Վ. Քինե, նշվ. աշխ., հ. 2, էջ 114, 237։
19 Դր. Հ. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զէյթուն, Նիւ-Եորք, 1934, էջ 70։
20 Համմտ. Վ. Քինե, նշվ. աշխ., հ. 2, էջ 114, 241։
21 Նույն տեղում, էջ 240—241։
22 Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա—Բ, երկ. տպագրութիւն, Վենետիկ, Ս. Ղազար, 1903—1905, հ. Ա, էջ 55։
23 Դր. Հ. Գալուստյան, նշվ. աշխ., էջ 70։
24 Նույն տեղում, էջ 67։
25 Համմտ. Վ. Քինե, նշվ. աշխ., հ. 2, էջ 114, 139։ XIX դարի վերջերին քաղաքում բնակվում էին 16500 հայեր (տե՛ս Ս. Էփրիկյան, նշվ. աշխ., էջ 145)։
26 «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 1. Երևան, 1974, էջ 346։
27 Գ. Սարաֆյան, Պատմութիւն Անթէպի հայոց, հ. 1, Լոս-Անճէլոս, 1953, էջ 25։
28 Համմտ. Վ. Քինե, նշվ. աշխ., հ. 2, էջ 114, 261։
29 Նույն տեղում, էջ 114, 267։
30 Ըստ անգլիական հյուպատոսի տեղակալ Ջ. Հ. Ֆիցմորիսի տեղեկագրի, 1895 թ. դեկտեմբերի 28-ից առաջ, այսինքն նախքան կոտորածը, քաղաքի բնակչության 20 հազարը հայեր էին (տե՛ս Ա. Սահակյան, Դիւցազնական Ուրֆան և իր հայորդիները, Պէյրութ, 1955, էջ 685)։
31 Նույն տեղում։
32 „Salname-i vilayet-i Halep", Dersaadet, 1321, s. 439—440.
33 Ա. Սահակյան, նշվ. աշխ., էջ 659—662։
34 Նույն տեղում, էջ 323—688։ «Հայրենիքի ձայն», 12 հունվարի 1972 թ.։

35 Տե՛ս Վ. Քինե, նշվ. աշխ., հ. 2, էջ 363։

36 Նույն տեղում, էջ 366։

37 Ս. Էփրիկյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 83։

38 Վ. Քինե, նշվ. աշխ., հ. 2, էջ 363։

39 Տե՛ս Ս. Էփրիկյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 83։

40 Գ. Սրվանձտյանց, նշվ. աշխ., էջ 284։

41 Տե՛ս Վ. Քինե, նշվ. աշխ., հ. 2, էջ 319։ Մեր կարծիքով, Վ. Քինեի աշխատության մեջ Անջրդիի փոխարեն աղավաղումով հիշատակվում է «Atchikli»—Հ. Գ.։

42 „Annuaire Oriental", Constantinople, 1912, p. 1579.

43 *Ali Cevat*, Memalik-i Osmaniyenin tarih ve coğrafya lügati, Dersaadet, 1313 s. 115։

44 Վ. Քինեի ցուցակի մեջ մտնում են հետևյալ գյուղերը՝ Հյուսեյնիկ, Քեսիրիկ, Սուրսուրի, Բազմաշեն, Իշմե, Խուլլու (Թլկատին), Փարչանջ, Հողե, Վարդաթիլ, Դատեմ, Մորենիկ, Աղմեզիրե, Շեյխ-Հաջի, Ախոռ—Հ. Գ.։

45 Հաշվարկը կատարված է մեր կողմից։ Տե՛ս Ս. Էփրիկյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 163։

46 Տե՛ս Մանուկ Գ. Ոիզմեճյան, Խարբերդը և իր զաւակները, Ֆրէզնո—Քալիֆորնիա, 1955։ Վահե Հայկ, նշվ. աշխ.։

47 Հմմտ. Վ. Քինե, նշվ. աշխ., հ. 2, էջ 114, 243, 245, 247։

48 Գր. Հ. Գալուստյան, նշվ. աշխ., էջ 81—83։

49 Ս. Էփրիկյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 770։

50 Նույն տեղում։

51 Այդ թվում Զեյթունից մոտավորապես կես ժամ հեռավորության վրա գտնվող Էկլենջեք կամ Վանքի թաղ կոչվող գյուղը, որը պաշտոնական վարչական բաժանումով ցույց է տրվում որպես քաղաքի թաղերից մեկը՝ Թեքքե-մահալլեսի անունով։ (Տե՛ս «Salname-i vilayet-i Halep», 1321, s. 484).

52 Գր. Հ. Գալուստյան, նշվ. աշխ., էջ 82—83։ Հաշվի չենք առել Սիսնեն, որը պատկանում էր Անտրունի գավառին, դրա փոխարեն որպես Զեյթունի գյուղեր վերցրել ենք Ֆրնուզը, Բոզ-օղլանը, Բուղուրլուն և Մաջարլը, որոնք զետեղվել են Մարաշի ցուցակում (տե՛ս նույն տեղում, էջ 39—40)։

53 250 տուն՝ Աղասի, Զեյթուն և իր շրջակաները. Պէյրութ, 1968, էջ 22։ 400 տուն՝ Գր. Հ. Գալուստեան, նշվ. աշխ., էջ 63։

54 Աղասի, նշվ. աշխ., էջ 22—23։

55 Նույն տեղում։ Հաշվի մեջ չենք մտցրել Ենիջե-կալեն, Մուշիկ-ղերեն, Տունգալան, որպես Մարաշի կազայի ենթակա գյուղեր—Հ. Գ.։

56 «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 1, Երևան, 1974, էջ 403։

57 „Salname-i vilayeti Halep", 1321, s. 503.

58 Հալեպի տարեգրքի վերաբերյալ բոլոր հաշվումները կատարված են մեր կողմից։ Վերցված են ըստ կազաների տրված տվյալները։ Հաշվի չեն առնված օտարահպատակները (վիլայեթում 2522 մարդ) և այսպես կոչված «յարանջիները» (ամբողջ վիլայեթում մոտավորապես 4000 մարդ), որոնք տեղացիներ չէին և անկասկած պատկանում էին տարբեր ազգությունների (Տե՛ս „Salname-i vilayet-i Halep", Dersaadet, 1314)։

59 Տե՛ս Վ. Քինե, նշվ. աշխ., հ. 2, էջ 114։

60 Առանց հաշվի առնելու Վ. Քինեի կողմից ներկայացվող 70 հազար «անապատի քոչվորները», որոնք ըստ կազաների չեն բաժանվում (տե՛ս նույն տեղում)։

61 Հաշվումները կատարված են մեր կողմից (տե՛ս նույն տեղում)։

62 Տե՛ս „Salname-i vilayet-i Halep", 1314, s. 311.

63 Տե՛ս Վ. Քինեի, նշվ. աշխ., հ. 2, էջ 114։

64 Տե՛ս նույն տեղում, էջ 322։

65 Տե՛ս նույն տեղում, էջ 618։

66 „Annuaire Oriental", 1912, p. 1699.

67 Նույն տեղում, էջ 1859։

68 Տե՛ս „Türkiye Cumhuriyeti devlet yıllığı", 1929—1930, Istanbul, 1930.

69 Ա. Ալպոյաճյան, Պատմութիւն Եդեսիոյ հայոց, Պէյրութ, 1961, էջ 44, 482—483։

70 Թեոդիկ, Ամէնուն տարեցոյցը, ԺԶ տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 261։

71 Տե՛ս Վ. Քինեի, նշվ. աշխ., հ. 1, էջ 618։

72 Տե՛ս նույն տեղում։